

«...ամենից դժվար բանը հեքիաթն  
իրականություն դարձնելն է<sup>1</sup>»:  
*Ռուբեն Հովսեփյան*

## ՀԵՔԻԱԹՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆՈՂԸ

Ռուբեն Հովսեփյանի հիշատակին\*

**Բանալի բառեր** – Ռուբեն Հովսեփյան, մահախոսականի ժանր, թարգմանություն, Գաբրիել Գարսիա Մարկես, «Հարյուր տարվա մենություն», հայ խորհրդային արձակ, մոզական ռեալիզմ:

**2016 թ. հոկտեմբերի 27-ին կյանքից հեռացավ արձակագիր, թարգմանիչ, կինոսցենարիստ Ռուբեն Հովսեփյանը:**



Ռուբեն Հովսեփյանը ծնվել է 1939 թ. մայիսի 5-ին, Երևանում: 1962-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետը: 1965-66 թթ. աշխատել է «Ավանգարդ» թերթում՝ որպես արվեստի և գրականության բաժնի վարիչ, 1970-74-ին՝ «Սովետական գրականություն» ամսագրում՝ արձակի բաժնի վարիչ: 1975 թ. ավարտել է Մոսկվայի կինոսցենարիստների և կինոբեմադրիչների բարձրագույն դասընթացը: 1975-76 թթ. եղել է ՀՍՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների

պետական կոմիտեի երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագիր, 1980-81-ին՝ «Սովետական գրականություն» ամսագրի գրական-գեղարվեստական գրականության բաժնի վարիչ, 1981-82-ին՝ «Սովետական գրող» (այժմ՝ «Նաիրի») հրատարակչության գեղարվեստական գրականության բաժնի վա-

\*Ընդունվել է տպագրության 2.12.2016:  
1 Հովսեփյան Ռուբեն, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 363:

րիչ, ապա՝ գլխավոր խմբագիր: 1988–89 թթ. ընտրվել է ՀԳՄ վարչության քարտուղար: 1989–ից «Նորք» հանդեսի տնօրենն էր, ապա՝ գլխավոր խմբագիրը: Եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 1965 թ. հրատարակել է «Որոնումներ» խորագրով վիպակների և պատմվածքների առաջին ժողովածուն: Դրան հաջորդել են «Երկու վիպակ» (1970), «Ամենատաք երկիրը» (1977), «Երկար, հրաշալի օր» և «Ճայերը» (1980), «Որդան կարմիր» (1984), «Ծիրանի ծառերի տակ» (2006), «Նռներ» (2016) և այլ ժողովածուները: Ռ. Հովսեփյանի սցենարներով «Մոսֆիլմում» և «Հայֆիլմում» նկարահանվել են «Հնձան» (1973), «Ամենատաք երկիրը» (1983), «Ապրիլ» (1985), «Խնձորի այգին» (1985) ֆիլմերը:

Ռուբեն Հովսեփյանի երկերը թարգմանվել են ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով: Հայ ընթերցողին նրա թարգմանությամբ ներկայացվել են Գաբրիել Գաբրիա Մարկեսի, Լև Տոլստոյի, Անտոն Չեխովի ստեղծագործությունները: Արժանացել է ՀԳՄ Գերենիկ Դեմիրճյանի անվան (1980), Հրանտ Մաթևոսյանի անվան (2010), ՀՀ նախագահի (2006) մրցանակների, պարգևատրվել է «Մովսես Խորենացի» (2009) և «Երախտագիտության» (2016) մեդալներով: 2014 թ. արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման:

\* \* \*

Սովորաբար քիչ թե շատ հայտնի կամ որևէ վաստակ ունեցող մարդու մահը դառնում է ևս մեկ անգամ հանրությանը նրա կյանքի և գործունեության մասին հիշեցնելու առիթ: Մահն ընդհանրապես առիթ է տալիս կյանքի մասին խոսելու: Ինչո՞ւ է այդպես: Կյանքի ցանկացած պահին կենսագրության արձանագրումն ունի ֆիքսացիոն նշանակություն, մինչդեռ ավարտից հետո է միայն, որ կարող ենք խոսել որևէ մարդու (կամ երևույթի) ամբողջական կենսագրության մասին: Այսինքն՝ ավարտը ենթադրում է ոչ միայն վախճան, այլև ամբողջացնելու հնարավորություն: Մահախոսականները որևէ մարդու առաջին համառոտ կենսագրականներն են, իսկ կենդանության օրոք գրված կենսագրություններն ընդամենը վիճակ են արձանագրում:

Ինչպիսին էլ լինեն մահախոսականները՝ պաշտոնական, ոչ պաշտոնական, գիտական, հրապարակախոսական, գնահատողական, վերաբերմունքային, չեզոք, ունեն ժանրային մեկ ընդհանրություն. դրանցում առաջին անգամ վերստեղծվում է մարդու կյանքն ամբողջությամբ՝ ծննդյան օրից մինչև մահը: Սրանք առաջին ավարտուն կենսագրություններն են, որոնք շարունակություն չեն պահանջում և, ըստ էության, փոփոխման ենթակա չեն: Պատահական չէ, որ ռուս հայտնի գրականագետ Մ. Բախտինը ժամանակակից վեպի հիմքը համարում էր մահախոսականները, որոնցից էլ, ըստ նրա, առաջացել է կենսագրական քրոնոտոպը՝ սկիզբ տալով վիպական դարաշրջանի ամբողջ գրականությանը<sup>2</sup>: Եվ այս համատեքստում է ահա, որ մահախոսականի ժանրի մասին խոսելը դադարում

2 Տե՛ս Бахтин М. Формы времени и хронотопа в романе, <http://philologos.narod.ru/bakhtin/hronotop/hronotop3.html>, 30.11.2016.

է «փոքր-ինչ ոչ գրական հարցադրում» լինել:

Ուրեմն՝ Ռուբեն Հովսեփյանի մահվանից հետո առաջին անգամ առիթ ենք ունենում խոսելու հեղինակի մասին: Սակայն չնայած այդ հանգամանքին՝ մեր առաջ խնդիր չենք դրել վերստեղծել հեղինակի ամբողջական կենսագրությունը, ինչպես դա արվում է արդեն ավարտված կյանքով հեղինակների հետ կապված: Ավելի շուտ՝ փորձելու ենք մտնել նրա ստեղծագործական տարածություն՝ երբեմն նույնիսկ հաշվի չառնելով կենսագրական գործոնները, այլ հիմք ընդունելով առաջին հերթին տեքստերը: Ուրեմն փորձելով հնարավորինս հեռու պահել տեքստը դասական մահախոսականի ժանրի ընդհանուր հատկանիշներից, բայց միևնույն ժամանակ մնալով նույն տրամաբանության մեջ, ձգտելու ենք խոսել հեղինակի ոչ թե կյանքի, այլ ստեղծագործության մասին՝ նայելով մի կետից, որտեղից արդեն շարունակություն չի ենթադրվում:

Դժվար է, սակայն, համակողմանիորեն ներկայացնել մի հեղինակի ստեղծագործությունը, որի թարգմանական, կինոսցենարիստական և խմբագրական գործունեությունը նույնչափ կարևոր են մշակութային համատեքստում և գրեթե նույնպիսի դեր ու կշիռ են ունեցել՝ յուրաքանչյուրն իր տեղում: Հարկ է վերականգնել այն ամենը, ինչը բացահայտելու համար այլևս նրա կենդանի վկայությունը չենք ունենալու. այժմ դա անելու գործիքները միայն ընթերցանությունը, բանասիրական աշխատանքն ու երբեմն էլ երևակայությունն են:

Բացի սեփական ստեղծագործություններից՝ Ռուբեն Հովսեփյանը հայ ընթերցողին նվիրեց նաև Գաբրիել Գաբսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» գրքի հայերեն թարգմանությունը: Դա կարևոր դեր խաղաց, ինչպես ընթերցասերների ձաշակի զարգացման, այնպես էլ հայ գրականության ընթացքի մեջ: Այդ թարգմանությունը մինչ այժմ էլ մնում է անգերազանցելի, քանի որ բացառիկ է լեզվառձական արտահայտչամիջոցների կիրառման հմտությունների առումով: Մարկեսի հայերեն թարգմանությունից հետո հայ գրականություն «ներխուժած» **մոզական ռեալիզմը** հաճախ հասնում էր պարզ կրկնության, իսկ երբեմն էլ այնտեղ բացակայում էր կամ «ռեալիզմը», կամ «մոզությունը»:

Եվ մոզական ռեալիզմի իրացնողներից մեկը դարձավ հենց ինքը՝ Ռուբեն Հովսեփյանը, ինչը լավագույնս երևում է նրա վաղ շրջանի գործերում, ինչպես, օրինակ «Որդան կարմիր» վիպակում<sup>3</sup>՝ նոր կառուցվող տան հիմքից օձերին վտարելու տեսարանում. «Տարօրինակ եղանակ էր փչում շվին՝ կանչ էր, քայլերգ էր, որ հյուսվում էր հեքիմի գունատ, համարյա թափանցիկ մատների հազիվ նկատելի թրթռումներից և քարերի տակից ու փոսերի միջից գլուխները տնկած օձերին, թվում էր, ոչ թե մեղեդին, այլ մատների հենց այդ թրթռումն էր հրապուրում: Ետ-ետ քայլելով՝ հեքիմը հասավ սայլին, որի մեջ դրված երկար, դազադանման սնդուկի կափարիչը նախապես բաց էր թողել: Լևոնը վաթսունհինգ, տղաները՝ վաթսուներեք իժ հաշվեցին, բոլորն էլ մեկիկ-մեկիկ դուրս եկան թաքստոցներից, սողացին հեքիմի նվազի հետևից ու մտան սնդուկ»<sup>4</sup>: Այն

3 Տե՛ս Հովսեփյան Ռուբեն, Որդան կարմիր, Եր., 2015, էջ 141-308:

4 Հովսեփյան Ռուբեն, Նույն տեղում, էջ 153-154:

շարունակվում է կույր Մարիամի կամ Նենեի՝ հին գորգի վրա ապրելու, ընտանիքը դժբախտություններից փրկելու պատմություններով, իսկ ավելի ուշ շրջանի ստեղծագործություններում, օրինակ «Ծիրանի ծառերի տակ» վիպակում դրսևորվում է կայծակի՝ Ենոքին խփելու տեսարանում՝ «Կայծակը մեկեն չէր սպանել Ենոքին. գլխից մտել էր, ոտքերից դուրս եկել: Ներսը շամփրող հոսանքի ուղղությունը բռնած Ենոքի հայացքը մինչև հասել էր վերջնակետին, ոտնամատների տակ արդեն բոցկլտացել էր կրակը: Նա հասցրել էր այրվող ոտքով, ինչպես շան լակոտի, սայլակից ցած գցել վեց տարեկան որդուն, ինքը նետվել էր հակառակ կողմը՝ վախենալով, որ հորն օգնելու անմիտ բնագոյով՝ տղան խարույկը կարող է նետվել և ողջակիզվել իր հետ: «Մոտ չգաս, գառս», վերջին ձիչն էր արձակել Ենոքը, բոլորովին անտեղյակ, որ որդու ջարդված ձախ ոտքը գամվել է ճամփեգրի քարերի մեջ, իսկ մթագնող ուղեղը կորցրել լեզվի կապերը»<sup>5</sup>: Այստեղ մոգությունն ու ռեալիզմն այնքան ամուր են ազդեցված միմյանց, որ ընթերցողը կորցնում է հորինվածքի զգացողությունը, ինչն էլ հենց գրական այս ուղղության մեջ հաջողության հասնելու կարևորագույն կետերից է, և ոչ բոլորն են այդ հաջողությունն ունենում: Այս գրական ուղղությանը պատկանող ստեղծագործություններում հաճախակի թերացումներն ու թերությունները նկատելը բավական են՝ հասկանալու համար, թե ինչու Ռ. Հովսեփյանը մի առիթով, բնավ ոչ պատահականորեն, նշում է, որ ամենից դժվար բանը հեքիաթն իրականություն դարձնելն է<sup>6</sup>: Մի բան, որ Ռուբեն Հովսեփյանի մոտ ստացվում է այդքան սահուն կերպով:

Ինքը՝ Ռուբեն Հովսեփյանը, այդ հեքիաթն իրականություն դարձնող ոչ միայն ամենաարհեստավարժ, այլ նաև առաջին հեղինակներից է: Թեև հազվադեպ չեն նաև գրականագիտական այն մեկնաբանությունները, երբ հեղինակին փորձում են տեղավորել սոսկ ռեալիզմի շրջանակներում<sup>7</sup>, սակայն կարծում ենք՝ չենք սխալվի, եթե ասենք, որ Ռուբեն Հովսեփյանն է կանգնած հայ (գոնե արևելահայ) գրականության մեջ մոգական ռեալիզմի իրացման ակունքներում, թեև այս ուղղությունը մեզանում շատ ավելի հաճախ կապվում է Լևոն Խեչոյանի անվան և ստեղծագործության հետ:

Ռուբեն Հովսեփյանի արձակի մյուս ընդգծելի առանձնահատկությունն այն է, որ այստեղ դժվար է գլխի ընկնել ստեղծագործության ժամանակը: Սովորաբար ժամանակի շունչը տեքստում չզգալը կարող է ընկալվել իբրև բացասական հատկություն, սակայն սա այն դեպքն է, երբ խոսքը ոչ թե գեղարվեստական, այլ գաղափարական ժամանակի մասին է:

Խորհրդահայ գրականության առաջին տասնամյակներին՝ 1920–1930–ական թվականներին, մի այսպիսի անհասկանալի ձևակերպում կար՝ ուղեկից գրողներ. այս գրեթե ոչինչ չատող եզրի ներքո քննադատները հասկանում էին այն հեղինակներին, որոնց գրականությունը գաղափարական ուղղվածության չէր ծառայում: Դրանք ոչ հեղափոխական, ոչ պրոլե-

5 Նույն տեղում, էջ 316:

6 Տե՛ս Հովսեփյան Ռուբեն, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 363:

7 Տե՛ս Բաղայան Ս. Գ., Ռուբեն Հովսեփյանի պատմվածքները, <http://lraber.asj-oa.am/6317/1/206-214.pdf>, 30. 11. 2016 թ.:

տարական, բայց նաև ոչ հակահեղափոխական գրողներն էին՝ Ստեփան Զորյան, Դերենիկ Դեմիրձյան, Վահան Թոթովենց և այլն: Այլ կերպ նույնիսկ կարելի է ասել, որ սրանք այն հեղինակներն էին, որոնք ամենից շատն էին շեշտը դնում գեղարվեստականության վրա:

Որոշակի հեռավորությունից նայելով 1960-ականների արձակին՝ նման մի դեր էլ կարելի է հատկացնել Ռուբեն Հովսեփյանին, ում գրականության միայն գեղարվեստական հատկանիշներից է թերևս, որ կարելի է գլխի ընկնել գրված լինելու մոտավոր ժամանակը<sup>8</sup>:

Դժվար է հավատալ, որ խորհրդային շրջանում որևէ հեղինակ կարող էր գրել այսքան ապաստվետականացված տեքստեր: Եվ այս դեպքում ապաստվետականացվածությունը ոչ միայն սովետամետության, այլև հակասովետականության բացակայությունն է: Ռուբեն Հովսեփյանի՝ խորհրդային շրջանում գրված պատմվածքներում ու վիպակներում հայտնվող հերոսները շատ հազվադեպ են որևէ քաղաքական գաղափարի կրող, այդպիսին լինելու դեպքում էլ շատ դժվարությամբ կարելի է հասկանալ՝ հեղինակը համակրո՞ւմ, թե՛ հակակրո՞ւմ է այս հեղափոխականին կամ այս հակահեղափոխականին, որովհետև նրա ստեղծագործությունների կերպարները նախ և առաջ դրված են մարդկային հարաբերությունների, այլ ոչ թե գաղափարական խնդիրների հարթության վրա: Սրանք պարզ մարդիկ են, պարզ մարդկային զգացմունքներով, վառ օրինակ՝ Լևոն-Դերենիկ-Վահան հարաբերությունները «Որդան կարմիր» վիպակում. «Լևոնին խնայելով՝ Վահանը չէր պատմել Դերենիկի սպանության մանրամասները, հայտնել էր միայն, որ թերթի հանձնարարությամբ Գեչրլու մեկնած Դերենիկ Սիմոնյանը փետրվարյան խռովության զոհ է դարձել: <...> Այս մանրամասնությունները Լևոնն իմացել էր որդու գերեզմանը փնտրելիս: Նա երազում էր տեսել Դերենիկի գերեզմանը. ճերմակ շիրմաքար էր, ու վրան նստած լալիս էր Նենն: Առավոտյան Վահանին պատմեց երազը ու հայտնեց մտադրությունը՝ ինչ գնով էլ լինի, գտնել որդու գերեզմանը, ժողկոմ եղբայրը չհամարձակվեց ասել, որ գերեզման գոյություն չունի, որովհետև ձին Գեչրլու էր վերադարձել պոչին կապած պարանոսով միայն: Դերենիկը մաշվել էր, լուծվել հողի մեջ, ինչպես երևի աղն է լուծվում ջրում»<sup>9</sup>:

Այսպիսի հատկություն ունեն Հովսեփյանի՝ խորհրդային շրջանում գրված բոլոր գործերը, որոնցում եթե սկզբում էլ կան, ապա գնալով նվազում են հրապարակախոսական տարրերը՝ տեղն ավելի ու ավելի զիջելով գեղարվեստականությանը: Սակայն ուշարժան է, որ նույն տրամաբանությունը շարունակվում է նաև Ռուբեն Հովսեփյանի՝ հետխորհրդային շրջանում գրած ստեղծագործություններում, երբ թվում էր՝ պայմանները ոչ միայն թույլ էին տալիս, այլև խրախուսում, իսկ երբեմն էլ պարտադրում էին հակասովետականությունը.

« -Ներող կլինես, -հեգնեց Ավետիքը Շերեփուկին, -ինչպես գիտես, ձիերի համար պեռքարաններ չկան քաղաքում:

8 Սրանով կարող է պայմանավորված լինել նաև նրա ստեղծագործության եթե չասենք՝ լուսանցքային, ապա գոնե այս կամ այն հոսանքի մեջ ոչ առանց դժվարության տեղավորելի լինելը, քանի որ դա մի ժամանակաշրջան էր, երբ հոսանքների մեջ տեղավորվում էին հիմնականում ոչ թե ըստ գեղարվեստականության, այլ ըստ գաղափարախոսության:

9 Հովսեփյան Ռուբեն, Որդան կարմիր, Եր., 2015, էջ 205-206:

–Սովետի ժամանակ էլ չկար,–նոր կարգերին պաշտպան կանգնեց Շե-  
րեփուկը:

–Չկար,–համաձայնեց Ավետիքը: –Բայց ցարի ժամանակ կար, շահի  
ժամանակ կար: Հիմա ձիերի կարծիքով մենք առաջ ենք գնացել, թե՛  
ես»<sup>10</sup>,–գրում է Հովսեփյանը «Ծիրանի ծառերի տակ» վիպակում:

Մի դիտարկում ևս. Ռուբեն Հովսեփյանը հաճախ է ընկալվել ու մեկ-  
նաբանվել որպես Հայաստանի, հայկականության, հայի և հայոց հողի հետ  
բացառիկ կապվածության մասին ստեղծագործող հեղինակ<sup>11</sup>: Սակայն կար-  
ծում եմ՝ այդ կողմից նայելով՝ հեղինակի տեքստն ավելի շատ թերագնա-  
հատվում, քան արժևորվում է, որովհետև, ճիշտ է, նրանում պարզ երևում են  
հայ-Հայաստան-հայկական բառերն ու դրանց հաճախադեպությունը թե՛  
«Հայոց թաղ»–ում, թե՛ «Որդան կարմիր»–ում, թե՛ «Ծիրանի ծառերի տակ»–ում:  
Սակայն սա ոչ թե որևէ կոնկրետ ազգի պատմություն է, այլ մարդու և  
կենսական տարածության կապի մեկնաբանության միջոցով բոլոր այդպիսի  
հարաբերությունները ցուցանելու ձև, որ հասկանալի և հարազատ կարող է  
լինել ոչ միայն հային, այլև մարդուն ընդհանրապես: Հայոց թաղը միայն  
հայինը չէ, ինչպես որ Մակոնդոն միայն կոլումբիացիներինը չէ:

Իհարկե, Ռուբեն Հովսեփյանի գրական վաստակը հնարավորինս ճշգրիտ  
արժևորելու համար անհրաժեշտ է ոչ միայն անդրադառնալ նրա ստեղ-  
ծագործական աշխարհին՝ ամբողջական, ընդհանուր բնութագրության  
սկզբունքով, այլև յուրաքանչյուր ստեղծագործությունը խոր և համակողմա-  
նիորեն վերլուծելով: Դա, անշուշտ, առանձին աշխատության նյութ է և  
դժվար տեղավորելի է հողվածային ժանրի սահմաններում: Ուստի այստեղ  
կանգ ենք առնում՝ ոչ թե վերջակետ դնելով, այլ տեղ թողնելով՝ նորից ու  
նորից հեղինակի ստեղծագործության ծալքերը ուսումնասիրելու համար:

*Թագուհի Ա. Ղազարյան*

10 Նույն տեղում, էջ 325:

11 Տե՛ս օրինակ՝ **Փիլոյան Վ.**, Էս ենք. աշխարհի ստեղծածն ենք, «Գրական թերթ», 2014, <http://www.grakantert.am/%D5%A7%D5%BD-%D5%A5%D5%B6%D6%84-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%AB-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%A1%D5%AE%D5%B6-%D5%A5%D5%B6%D6%84-%D5%BE-%D6%83%D5%AB%D5%AC%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6/.> Աղայան Ն., Անցյալ կատարյալի ներկա ժամանակը, «Գրական թերթ», 2013, <http://www.grakantert.am/%D5%A1%D5%B6%D6%81%D5%B5%D5%A1%D5%AC-%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1-%D5%AA%D5%A1%D5%B4-%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1/> և շարունակ, 30. 11. 2016:

## Summary

### THE ONE, WHO TURNS FAIRY TALE TO REALITY

In memory of Ruben Hovsepyan

**Key words** – Ruben Hovsepyan, genre obituary, translation, Gabriel Garcia Markuez, One hundred years of solitude, Soviet-armenian prose, magical realism

Taguhi A. Ghazarian

In the article “The one, who turns fairy tale to reality” Taguhi Ghazarian gives the general description of Ruben Hovsepyan’s work. It is not classic obituary, but there we can see the main work and creation of the R. Hovsepyan. First of all the author of the article considers Hovsepyan as translator of Gabriel Garcia Markuez’s “One hundred years of solitude”. She thinks that this work had a great effect on Armenian magical realism and on literature of this period. There are also the question of Hovsepyan’s work’s “artistic” time and “ideological” time. Then we can see how Hovsepyan’s works were interpreted as works about Armenia and Armenians and how we can change this interpretation.

## Резюме

### ТОТ, КТО ПРЕВРАЩАЛ СКАЗКУ В БЫЛЬ

Памяти Рубена Овсепяна

Тагуи А. Казарян

**Ключевые слова** – Рубен Овсепян, жанр некролога, перевод, Габриел Гарсия Маркес, Сто лет одиночества, советско-армянская проза, магический реализм.

В статье рассматриваются общие характеристики работы Рубена Овсепяна. Не будучи “в классическом смысле” некрологом, тем не менее, статья дает представление о литературной деятельности Рубена Овсепяна. Автор в первую очередь обратил внимание на его переводы, особенно на “Сто лет одиночества”, рассматривая значение “магического реализма” в армянской литературе и в работах Р. Овсепяна в частности. В статье обсуждаются задачи “идеологического” и “художественного” времени романов Овсепяна, а также овсепянские интерпретации “армянина” и “Армении”.